درعليهده غلطهده « آرهولك » غزتەسی ادارەخانەسە

Նամակ կամ որ և է գրութիւն պէտք է ուղղել
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ՊՈԼԻՍ, Ղալաթիա, Նորատունկեան խան

*Les Annonces sont reçues*
*à la Direction du Journal "ARÉVELK,,*
Galata, CONSTANTINOPLE

20 ՓԱՐԱ 20

# ԱՐԵՒԵԼՔ

## ՕՐԱԹԵՐԹ

### ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլսոյ եւ գաւառներու համար տարեկան 140 ղրշ.
» » » վեցամսեայ 70 »
» » » եռամսեայ 40 »
Օտար երկիրներու համար տարեկան 40 Ֆրֆ.
» » » վեցամսեայ 20 »
Դրամի փոխարէն փոստայի փուլ կ'ընդունուի, 115 ղրուշի փուլը 100 ղրուշի հաշուով։
Տեղական Թղթատարի ծախքը բաժանորդաց կը վերաբերի։
Ծանուցմանց համար պէտք է դիմել ուղղակի խմբագրատուն։

20 ՓԱՐԱ 20

## ԱՋ ՈՒ ՁԱԽ

### ԺԱՄԱՆՏԱԽՏԻՆ ԱՌԹԻՒ

Ձեմ գիտեր թէ ի՛նչ կերպով կարելի է բացատրել այն ծիծաղելի վիվլուքը զոր այս պահուս հասարակութեան գրեթէ ամէն դասակարգերուն պատկանող անհատներ եւ ընտանիքներ փրցուցած են՝ Պոլսոյ մէջ պատահած ժանտախտի քանի մը անկարեւոր դէպքերու համար։ «Ժանտախտ կայ», «ժանտախտին դէմ ի՛նչ պիտի ընենք», եւ այլն ըսելով, այդ մարդիկը յուսահատ դէմքով մը մէյմէկ հարցական նշան կը դառնեն իրարու դէմքին, մատնուած հեւքոտ իրարանցումի մը, որ ապահովաբար ամէնէն անիմաստ բաներէն մէկն է եւ որ երբեք լաւ արդիւնք մը առաջ չի բերեր իրենց վրայ։ Ընդհակառակը այդ ջլատութենէն, այդ յուսահատութենէն առաջ կու գայ հոգեկան տուայտանք մը որ մարդը թուլ, ճմրթկած լաթի կտոր մը կը դարձնէ, որ մարդուն ջղային կազմուածքը կը քանդէ, կը մեռցնէ աշխատելու բովանդակ թափն ու տրամադրութիւնը, մէկ խօսքով բարոյական անկման մը կ'ենթարկէ զայն։

Երկու երեք օրէ ի վեր բաւական տեսայ այդ միամիտ մարդոցմէն, որոնցմէ շատեր նոյն իսկ ինծի ծանօթներ էին, եւ որոնց հետ խօսակցութիւն մը հաստատեցէք որ հասարակ վայելք մը չպիտի նըկատուէր երբեք։ Ծիծաղելի վախ մը գըրկած էր զիրենք, արհաւիրք մը վրդոված էր իրենց հոգին, եւ չէին գիտեր թէ ի՛նչ կ'ըլլէ բերաննուն, չէին գիտեր թէ ի՛նչ կ'ընեն։ Միայն, երկու խօսքը անգամ մը «ժանտախտ» բառը կ'արտասանէին մեքենաբար, առանց ո՛ եւ է կապի, առանց ո՛ եւ է պատշաճութեան։ Կերակուրի վըրա՛յ կը խօսիս կոր, հիւանդութեան անունը անխուսափելի կերպով կը յայտնուէր յանկարծ, հոգ չէ թէ ո՛չ մէկ բան զինքը հրաւիրած ըլլար։ Օրինակի համար պատինճանին համեղութիւնը գոված միջոցին, խօսակիցդ յանկարծ «ժանտախտը ի՛նչ պիտի ընենք» մը կը նետէր մէջտեղ, հարցում մը՝ որ պատինճանի մասին բացուած խօսակցութեան մը միջոցին մանաւանդ, ընականաբար չենք շնորհք պատասխան մը չպիտի կրնար խլել քիզմէ։ Միեւնոյն կերպով օրուան պտուղներուն, ծիրանին, կեռասին, բալին, եւ այլն աղուորութեան, եւ այս տարուան առատութեան չուրջը դարձող խօսակցութիւններ ժանտախտով կը վերջանային՝ եթէ երբեք արդէն իսկ ժանտախտով չէին սկսած։

Այդ խենթ իրարանցումին մեծը մասնաւորապէս կիներուն քովն է, ռամիկ կիներուն քով մանաւանդ, որոնք լաճերնին գրկած՝ թաղին մէկ դռնէն միւսը կը սողոսկին՝ ժանտախտին տխուր լուրը դուժելու համար։ Այդ կիներուն խըրատ տուող մը չկայ, մէկը չտեսայ չուրջերնին որ զիրենք ապահովցնէր, որ աշխատէր մարել այն սոսկումն ու սարսափը՝ ուրկէ խեղճերը անդիմադրելի համակուած էին, վախնալով հիւանդութենէ մը որուն վրայ գաղափար անգամ չունէին։ Շատերը փափսալով կը խօսին հիւանդութեան վրայ, թերեւս վախնալով որ... ժանտախտը կը լսէ, եւ զիրենք ալ կը վարակէ։ Վախը սաստիկ է մանաւանդ անոնց քով որոնք չար բախտը ունեցած են սանկ ճանճի գլխու մը եւ կամ լուի մը մեծութեամբ ո՛ եւ է ամնչան պալար մը հանելու իրենց մարմնին այս կամ այն մասին վրայ։ Մարդ չկայ որ իրենց ըսէ թէ ժանտախտին պատճառաւ մարմնին վրայ առաջ եկած այտուցքին եւ այդ կարգի դաճաճ պալարներու միջեւ լեռ ու ձոր կայ, թէ ժանտախտի այտուցքը ուրիշ տե-

[illegible]

Կը տեսնուի որ յուսահատելու, ջլատելու պատճառ մը չկայ մէջտեղ, եւ թէ ամէն մարդ անխռով խղճով ու ապահովութեամբ կրնայ իր գործը շարունակել։ Այդ տեսակ յուսահատութիւններէ, ջլատումներէ առաջ եկած վնասը ժանտախտի նոյն իսկ ամէնէն սոսկալի տեսակին վնասներէն շատ մեծ կրնայ ըլլալ. թող ոչ ոք մոռնայ այս կէտը։

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

---

## ՄԵՐ
### Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

## ԻՐ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԴՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Գ

### ՇՐՋԱՆ Ա. 1800—1840

Մինչեւ 1800-1820 վարժապետներու վրայ ո՛ եւ է տեղեկութիւն չունինք, արդէն վանքն ալ ծանօթութիւն մը չի կըրնար հայթայթել այս մասին։ 1820էն յետոյ՝ մինչեւ 30-32 թուականը՝ իբրեւ նահապետ վարժապետաց կը յիշուի վանքի միաբաններէն Տ. Յովհաննէս վարդապետ Պոլլանցին, որ այս կողմերը հայկաբանի եւ քերականագէտի հռչակ հանած է։ Նա է, որ Ս. Կարապետի աշակերտներուն նահապետական ընթերցանութենէ զատ՝ սկսեր է դասեր տալ հայերէն գրաբարի վրայ՝ քերականական կանոններով կամ — արուեստիւ քերականութեան —։ Քերականութիւն կամ արուեստ գիտնալն ամենաբարձր գիտութիւնն էր այն ատեն։ Անոր հետ քիչ մըն ալ ռախամ, կամ արուեստ համարակալութեան։ Թէ ո՛վ էր Պոլլանցիին վարժապետը — բան մը չենք գիտեր. բայց սա ստոյգ է որ Սմբդոլի նշանաւոր հռետոր Տ. Վարդան վարդապետը Ս. Առաքելոց վանքը բաւական ժամանակ կեցեր է իբրեւ վանահայր, յետոյ՝ ըստ աւանդութեան՝ նոյն պաշտօնով Ս. Կարապետ ալ կեցած ու աշակերտներ թողած է։ Տ. Վարդան վարդապետի աշակերտները իր հետ կը շրջէին, իր հետն էին Ս. Առաքելոց վանքին մէջն ալ, ինչպէս ձեռագրերու մէջ իրենց թողած յիշատակագրերէն յայտնի է — «Հրամանաւ մեծի վարդապետին մերոյ՝ Տ. Վարդանայ բաբունապետի ձեռն արկեալ է մեր կազմել զփերեւետեալ մատեանս Ս. Թարգմանչաց վանուց»։ Տարակոյս չկայ թէ Տ. Վարդան վարդապետի հետ Ս. Կարապետ գտնուած են նաեւ Տ. Յովհաննէս Կոլոտ եւ Տ. Գրիգոր Շղթայակիր, որոնք իրենց վարդապետի վախճանումէն վերջը՝ Սմբդոլէն կրկին կը վերադառնան Ս. Կարապետ, «ուր աւանդին զարուեստս հռետորութեան եւայլն, եւ էին բազումք, որ աշակերտէին նոցա»...։ Տ. Թէոդո-

[illegible]

---

## ՆՈՐ ՎԷՊ (38)

# ԴԱՏԱՐԿԱՊՈՐՏԸ

ԺԱ

—Որքա՜ն դէպքեր մէկ օրուան մէջ, մարքիզուհին որ երէկ կը սիրէր զիս, այսօր կ'ատէ... Լաւ վերջացած ժամադրութեան մը անմիտ մը հետ, որ հաճոյք կը զգայ Տոն Քիշոթի դեր խաղալով... Ցետոյ տղայ մըն ալ մէջտեղ ելաւ, ինէ ծը-

[illegible]

